ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/07

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Շահինյան
«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հակոբյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել.

1. Դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 09.04.2019թ.-ի թիվ 4 «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-6/19» ծածկագրով արձանագրությամբ՝ ООО”Автодор” և ООО “EBPO” /կոնսորցիում/ ընկերություններին 1-ին տեղ զբաղեցնելու որոշումը,

2. 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձի 17.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 23.04.2019թ., 29.04.2019թ., 08.05.2019թ. և 15.05.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 15.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.05.2019թ.:

2. «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սույն թվականի մարտի 13-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար հայտարարվել է տուրբինային յուղի ձեռքբերման «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-6/19» ծածկագրով բաց մրցույթ: 2019թ-ի ապրիլի 3-ին ՀՀ Ֆինանսների նախարարության էլեկտրոնային armeps համակարգի միջոցով տեղի է ունեցել հրավերի մասնակիցների հայտերի բացումը:

Հրավերի պահանջներին բավարարող հայտեր են ներկայացրել <<Ավտոֆան էյ Սի>> ՍՊԸ-ն 61 274 175 /վաթսունմեկ միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով, <<Մոսէսքո>> ՍՊԸ-ն 63 903 100 /վաթսուներեք միլիոն ինը հարյուր երեք հազար Մեկ հարյուր/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով, ՕՕՕ"Автодор" և ՕՕՕ "ԵԲՐՕ" /կոնսորցիում/ 6 633 000 /վեց միլիոն վեց հարյույ երեսուներեք հազար/" ՌԴ ռուբլի առանց ԱԱՀ, որը ըստ հրավերով սահմանված օրվա ԿԲ-ի փոխարժեքը սահմանելով 1 ռուբլի-7 դրամ 47 լումա ստացվում է 49 548 510 /քառասունինը միլիոն հինգ հարյուր բրեասունութ հազար հինգ հարյուր տաս/" ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով և ИП "Бабаян Инга" 8 574 340 /ութ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր քառասուն/ ՌԴ ռուբլի առանց ԱԱՀ, որը ըստ հրավերով սահմանված օրվա ԿԲ-ի փոխարժեքը սահմանելով 1 ռուբլի-7 դրամ 47 լումա ստացվում է 64 050 319,8 /վաթսունչորս միլիոն հիսուն հազար երեք հարյուր տասնինը ամբողջ ութ/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով:

<<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի 09.04.2019թ.-ի թիվ 4 <<ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-6/19>> ծածկագրով արձանագրությամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել ՕՕՕ"Автодор" և ՕՕՕ "ԵԲՐՕ" /կոնսորցիում/ ընկերությունը, 2-րդ տեղ <<Ավտոֆան էյ Սի>> ՍՊԸ-ն և 3-րդ տեղ «Մոսէսքո» ՍՊԸ-ն, սակայն ցանկանում եմ հայտնել, որ հանձնաժողովը հաշվի չի առել այն հանգամանքը, որ 1-ին տեղ զբաղեցրած ՕՕՕ"Автодор" և ՕՕՕ "ԵԲՐՕ" ընկերությունների ներկայացրած գինն իր մեջ չի ներառում ակցիզային հարկը (1կգ-ի համար 400 ՀՀ դրամ), որը ներառելու դեպքում նրա գնառաջարկը կազմում է ոչ թե 49 548 510 /քառասունինը միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր տաս/"

*ՀՀ դրամ առանց ԱԱՀ, այլ 49 548 510 ՀՀ դրամին գումարած 70,212 կգ-ի համար վճարվելիք ակցիզային հարկը (80,890լիտր*0,868=70,212կգ), որը կազմում է 28 084 800 /քսանութ միլիոն ութանասունչորս հազար ութ հարյուր/' ՀՀ դրամ և արդյունքում կստացվի 77 633 310/ յոթանասունյոթ միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր տաս/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, և այս դեպքում ՕՕՕ'Автодор" և ՕՕՕ "ԵԲՐՕ" ընկերությունները կզբաղեցնեն ոչ թե 1-ին այլ 4-րդ տեղը, ուստի հանձնաժողովը չի պահպանել հրավերի 5-րդ մասի և Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, այն է. «առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների զծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից», և խախտելով Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և հրավերի 8-րդ մասի 4-րդ կետը՝ այն է Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է' բավարար գնահատված հայտեր ներկայացուսծ մասնակիցների թվից' նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մուսսևակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնուսհատելիս հիմք է ընդունում համակարգում կցված' մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:*

Վերոհիշյալի հետ կապված ցանկանում եմ նշել, որ թեկուզ հանձնաժողովը չի տեսնում այդ հուսրկատեսակի վճարված չլինելու հանգամանքը, բայց այս դեպքում հաշվի առնելով, որ ՕՕՕ"Автодор" և ՕՕՕ "ԵԲՐՕ" ընկերությունները հանդիսանում են ոչ ռեզիդենտ, ուստի նրանց մատակարարումը կատարելուց հետո ակցիզային հարկի վճարման պարտավորությունը ընկնում է <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի ւ/ռա, քանի-որ նրանք են հանդիսանում ապրանք ստացողը և ստացվում է, որ հանձնաժողովը նախապատվությունը տվել է ավելի թանկ գնառաջարկին, քան տվյալ դեպքում առաջարկում էր «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ն և ոչ միայն նա:»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են

1. Դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 09.04.2019թ.-ի թիվ 4 «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-6/19» ծածկագրությամբ՝ ՕՕՕ"Автодор" և ՕՕՕ "ԵԲՐՕ" /կոնսորցիում/ ընկերություններին 1-ին տեղ զբաղեցնելու որոշումը,

2. Պարտավորեցնել 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ին:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.04.2019թ. գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Բի Էլ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերությունը կայանի կարիքների համար ս/թ մարտի 18-ին կազմակերպել է տուրբինային յուղի գնման նպատակով «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-6/19» ծածկագրով «Բաց մրցույթ» ընթացակարգը:

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

1. *ООО «АВТОДОР» և ООО «ЕВРО» (կոնսորցիում),*
2. *И/П Бабаян Инга Артуровна,*
3. *«Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ,*
4. *«ԿԱՐԵՆՕԻԼ» ՍՊԸ,*
5. *«Մոսէսքո» ՍՊԸ,*
6. *«ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ,*
7. *«Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ:*

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-մասի 10-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Բանի որ, ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերապահված չէ մասնակցի ներկայացրած գնային առաջարկին ավելացնել հաշվարկվող այլ (փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը) հարկատեսակները, հանձնաժողովը առաջարկել է՝ նվազագույն գնային առաջարկով՝ 6633000 ՌԴ ռուբլի, որը կազմում է 49548510 ՀՀ դրամ (հրավերով սահմանված էր որ եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հայտերի բացման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքով (03.04.2019թ. դրությամբ 1 ՌԴ ռուբլին կազմում էր 4 դրամ 47 լումա)), ООО «АВТОДОР» և ООО «ЕВРО»

(կոնսորցիում) ընկերություններին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ինչը որոշվել է ս/թ ապրիլի 9-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 որոշմամբ:

ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկվել համապատասխան գրություն ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցների գնային առաջարկներում ակցիզային հարկ ներառված լինելու կամ չլինելու հանգամանքը՝ գնային առաջարկները համեմատելու, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին ճշտելու նպատակով:

Առաջին տեղ զբաղեցրած ՕՕՕ «АВТОДОР» և ՕՕՕ «ЕВРО» (կոնսորցիում) մասնակիցը ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման փաստաթղթեր, որոնց մեջ նախկին երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված պայմանագրով մատակարարել է դիզելային վառելիք, որը գտնվում է ԳՄԱ 09100000 (վառելիք) խմբում, իսկ հրավերով նմանատիպ է սահմանված ԳՄԱ 09100000 խմբի ապրանքները (նավթ, ածուխ, նավթամթերք):

ճշտելու նպատակով հանձնաժողովը որոշեց կասեցնել հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և պարզաբանման նպատակով գրություն ուղարկվեց ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առաջին տեղ զբաղեցրած ՕՕՕ «АВТОДОР» և ՕՕՕ «ЕВРО» (կոնսորցիում) մասնակցի կողմից ներկայացված պայմանագիրը որպես նմանատիպ գնահատելու վերաբերյալ:»:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուն գտել է, որ «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերությունը կայանի կարիքների համար ս/թ մարտի 13-ին կազմակերպել է տուրբինային յուղի գնման նպատակով «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-6/19» ծածկագրով «Բաց մրցույթ» ընթացակարգը:

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝ ООО «АВТОДОР» և ООО «ЕВРО» (կոնսորցիում), И/П Бабаян Инга Артуровна, «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ, «ԿԱՐԵՆՕԻԼ» ՍՊԸ, «Մոսէսքո» ՍՊԸ, «ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ և «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ:

2019թ-ի ապրիլի 3-ին ՀՀ Ֆինանսների նախարարության էլեկտրոնային armeps համակարգի միջոցով տեղի է ունեցել հրավերի մասնակիցների հայտերի բացումը:

Հրավերի պահանջներին բավարարող հայտեր են ներկայացրել «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ն 61 274 175 /վաթսունմեկ միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար մեկ

հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով, «Մոսէքսքո» ՍՊԸ-ն 63 903 100 /վաթսուներեք միլիոն ինը հարյուր երեք հազար Մեկ հարյուր/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով, ООО"Автодор" և ООО "ЕВРО" /կոնսորցիում/ 6 633 000 /վեց միլիոն վեց հարյույ երեսուներեք հազար/' ՌԴ ռուբլի առանց ԱԱՀ, որը ըստ հրավերով սահմանված օրվա ԿԲ-ի փոխարժեքը սահմանելով 1 ռուբլի-7 դրամ 47 լումա ստացվում է 49 548 510 /քառասունինը միլիոն հինգ հարյուր բտեասուևութ հազար հինգ հարյուր տաս/' ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով ե ИП "Бабаян Инга" 8 574 340 /ութ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր քառասուն/ ՌԴ ռուբլի առանց ԱԱՀ, որը ըստ հրավերով սահմանված օրվա ԿԲ-ի փոխարժեքը սահմանելով 1 ռուբլի-7 դրամ 47 լումա ստացվում է 64 050 319,8 /վաթսունչորս միլիոն հիսուն հագար երեք հարյուր տասնինը ամբողջ ութ/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ, գնառաջարկով:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 09.04.2019թ.-ի թիվ 4 «ՀԱԷԿ-ՀԲՄԱՊՁԲ-6/19» ծածկագրով արձանագրությամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել ООО"Автодор" և ООО "ЕВРО" /կոնսորցիում/ ընկերությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն է որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ ՕՕՕ”Автодор” և ՕՕՕ “ԵԲՐՕ” ընկերությունների ներկայացրած գինն իր մեջ չի ներառում ակցիզային հարկը և որ ՕՕՕ”Автодор” ու ՕՕՕ “ԵԲՐՕ” ընկերությունները հանդիսանում են ոչ ռեզիդենտ (Հայաստանի Հանրապետությունում չունի հաշվառված մշտական հաստատություն):

Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը

հանգում է այն եզրակացության, որ «Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ավտոֆան էյ Սի» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ.-ին ներկայացրած բողոքն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ